

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ _____ / Ասատրյան Ա. /

«-----»-----2022 թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

*Կաթնաղբյուրի Մ. Գալշոյանի անվան
անվան միջնակարգ դպրոց*

ուսումնական հաստատության անվանումը, դասարան

Միսնոյան Անի Մկրտչի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

«2022-2023» ուստարի

Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1. Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)

XI դասարանում սովորում են 13 աշակերտներ, կան սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներ ,բայց բոլորը գտնվում են ծնողների խնամքի տակ: Դասարանում կան 6 տղա և 7 աղջիկ: Շատ հավասարակշռված և կազմակերպված դասարան է:Դասարանում առկա են որոշ կարգապահական խնդիրներ: Կան ուսման մեջ թերացողներ, ինչպես նաև ուսման առաջավորներ ,հերաքրքրասեր և ուսումնաստենչ աշակերտներ:

2. Ուստարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքները

ա/ Կարգապահական խնդիրների լուծում

բ/ Դասղեկի ժամեր

գ/ Դասալսումներ

դ/ Ցերեկույթների և միջոցառումների կազմակերպում

3. Հայեցի դաստիարակություն

3.1 - Հոգևոր դաստիարակություն

Հոգևոր դաստիարակության հիմքում պետք է դրվի Հայ Առաքելական եկեղեցու դերն ու նշանակությունը հայոց պետականության ամրապնդման գործում, ինչպես նաև աշխատանքներ տանել օրեցօր աճող աղանդավորական շարժումներից աշակերտներին զերծ պահելու համար:

3.2 - Գեղագիտական դաստիարակություն

Նախատեսվում է այցելություններ թանգարաններ և ցուցահանդեսներ

3.3- Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Գտնվելով պատերազմների մեջ և ունենալով թ՛է հին, թ՛է նորորյա հերոսներ պետք է անդադար բերել օրինակներ մեր պատմության փառահեղ էջերից, ձևավորելու համար այնպիսի հատկանիշներ ինչպիսիք են պատասխանատվությունը, արդարությունը, խիղճն ու հայրենասիրությունը, ինչպես նաև հայրենիքին անմնացորդ ծառայելը ի շահ իրենց պետության և իրենց հայրենիքի:

3.4- Ֆիզիկական դաստիարակություն

Շարժումը կյանքի հիմքն է, ֆիզկուլտուրան և սպորտը՝ առողջության գրավականներ:

Անչափ կարևորում են աշակերտների ակտիվ մասնակցությունը ֆիզկուլտուրայի դասերին, տարբեր մրցույթներին և սպորտլանդիաներին, ինչպես նաև սպորտըտային տարբեր խմբակներին:

3.5- Աշխատանքային դաստիարակություն

Տարատեսակ արտադասարանական, դպրոցական և այլ աշխատանքների ներգրավված լինելը սովորողներին օգնում է զարգացնել այնպիսի որակներ, ինչպիսիք են նախաձեռնելու ունակությունը, ուրիշների հետ համագործակցելու, կարծիք հայտնելու և մյուսների կարծիքը հարգելու, կոնֆլիկտային իրավիճակներից դուրս գալու և այլ շատ կարողություններ:

3.6- Բնապահպանական դաստիարակություն

Սովորողների մոտ պետք է զարգացնել պատասխանատու վերաբերմունք շրջակա միջավայրի նկատմամբ, որպեսզի նրանք ունենան բնապահպանական բարձր գիտակցություն, լինեն էկոլոգիապես գրագետ, ճիշտ գնահատեն բնապահպանական խնդիրները և գտնեն արդի լուծման ճանապարհներ և իրենց ներդրումն ունենան էկոհամակարգերի ստեղծման գործում:

3.7- Դպրոց-ընտանիք կապը

Երեխայի անհատականության սոցիալականացման խնդրի լուծումն անհնար է առանց դպրոցի և ծնողների սերտ համագործակցության :Ուսուցիչների փոխգործակցությունը ծնողների հետ կրթական գործընթացի որակը բարձրացնելու լավ միջոց է:

Յուրաքանչյուր երեխայի պոտենցյալ հնարավորությունների բացահայտման համար անհրաժեշտ է միասնական կրթական միջավայրի ստեղծում:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

<i>Ու/Չ</i>	<i>Ուս. աշխատանքի բովանդակությունը</i>	<i>Կատարման ժամկետը</i>	<i>Կատարող</i>
I	Ծանոթացում նոր ուս. տարվա պահանջներին	08.09.2022	դասղեկ
II	Դասարանական ակտիվի և ավագի ընտրություն	15.09.2022	դասղեկ, սովորողներ
III	Զրույց մասնագիտական կողնորոշման վերաբերյալ	22.09.2022	Դասղեկ, սովորողներ
IV	«Արցախյան 44-օրյա պատերազմի տարելիցը»	29.09.2022	Դասղեկ, սովորողներ
V	Դասարանական միջոցառում ուսուցչի օրվա առթիվ	05.10.2022	Դասղեկ, սովորողներ
VI	«Ինչպե՞ս հասկանալ դիմացինին»	12.10.2022	Դասղեկ, սովորողներ
VII	Մեր մեծանուն համագյուղացիները	19.10.2022	Դասղեկ, սովորողներ
VIII	«Ովքե՞ր են պատերազմներ հրահրողները»-քննարկում	02.11.2022	Դասղեկ, սովորողներ
IX	«Ծառատունկ», արտադասարանական աշխատանք	09.11.2022	դասղեկ, սովորողներ
X	«Հայաստան, իմ հայրենիք»-զրույց	16.11.2022	դասղեկ, սովորողներ
XI	«Պատվաստումները պետք է լինեն պարտադիր»-բանավեճ	23.11.2022	սովորողներ
XII	«Ինչպե՞ս կյանքում հաջողության հասնել»-զրույց	30.11.2022	դասղեկ, սովորողներ
XIII	«Իմ իրավունքներն ու պարտականությունները»-իրազեկում	07.12.2022	դասղեկ
XIV	«Լավ ու վատ բնավորություն»-քննարկում	14.12.2022	դասղեկ, սովորողներ
XV	Կիսամյակի ամփոփում	21.12.2022	դասղեկ
XVI	«Քաղաքացու և մարդու իրավունքներն ու պարտականությունները»	10.01.2023	դասղեկ
XVII	«Ընտանիքի դերը սովորողի արժեհամակարգի ձևավորման գործում»-զրույց	17.01.2023	դասղեկ, սովորողներ
XVIII	«Հայաստանի պաշտպանները երեկ, այսօր և վաղը»-զրույց	24.01.2023	դասղեկ, սովորողներ
XIX	«Հայաստան, իմ հայրենիք»-պատի թերթի ձևավորում	31.01.2023	սովորողներ
XX	«Ահաբեկիչների հետ պետք է բանակցել, թե՞ ոչ»-բանավեճ	08.02.2023	սովորողներ
XXI	«Արդյոք մի՞շտ են ծնողները ճիշտ»-զրույց	15.02.2023	դասղեկ, սովորողներ
XXII	«Ինչպե՞ս պահպանել երկիր մոլորակը»-զրույց	22.02.2023	դասղեկ, սովորողներ
XXIII	«Սիրում եմ...»-շարադրություն	02.03.2023	սովորողներ
XXIV	Դասարանական միջոցառում նվիրված մարտի 8-ին	09.03.2023	սովորողներ
XXV	«Անհատի բարեկրթությունը»-զրույց	16.03.2023	դասղեկ, սովորողներ

XXVI	«Ընկերը ճանաչվում է դժբախտության պահին»-գրույց	30.03.2023	դասադեկ, սովորողներ
XXVII	Կարգապահական հարցերի քննարկում	04.04.2023	դասադեկ
XXVIII	«Մեծերը, փոքրերը և ծնողները»-գրույց	11.04.2023	դասադեկ, սովորողներ
XXIX	«Եթե ես կարողանայի»-քննարկում	18.04.2023	դասադեկ, սովորողներ
XXX	Այցելություն Եղեռնի հուշաքար	24.04.2023	դասադեկ, սովորողներ
XXXI	«Հայաստանը պատմության քառուղիներում»-զեկույց	03.05.2023	սովորողներ
XXXII	«Վատ սովորություններն ու դրանց հետևանքները»-գրույց	10.05.2023	դասադեկ, սովորողներ
XXXIII	Ուսումնական տարվա ամփոփում	17.05.2023	դասադեկ
XXXIV	Էքսկուրսիա	24.05.2023	դասադեկ, սովորողներ

ԴԱՍԱՐԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԴՊՐՈՑԱԿԱՆ, ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ

<i>Անցկացման ժամկետը</i>	<i>Միջոցառման անվանումը</i>	<i>Անցկացման վայրը</i>
01.09	Գիտելիքի օր	
21.09	ՀՀ անկախության օր	
05.10	Ուսուցչի օր	
13.11	Մ. Գալշոյանի հիշատակին	
24.12	Տարեմուտի հանդես	
28.01	Հայոց բանակի օր	
08.03	Մարտի 8, կանանց տոն	
24.04	Ցեղասպանության հիշատակի օր	
09.05	Մայիսի 9	

ԴԱՄՂԵԿԻ ԴԱՍԱԼՍՈՒՄՆԵՐ

<i>Դասալսման օրը</i>	<i>Առարկան, դասավանդող ուսուցիչը</i>	<i>Դասի թեման</i>	<i>Դասալսման նպատակը</i>

ԴԱՄՂԵԿԻ ԺԱՄ

<i>1-ին կիսամյակ</i>		<i>2-րդ կիսամյակ</i>	
<i>Շաբաթվա օրը</i>	<i>դասաժամը</i>	<i>Շաբաթվա օրը</i>	<i>դասաժամը</i>

ԴԱՍԱՐԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՆՁՆԱԳԻՐԸ

1. Երեխաների թիվը դասարանում

ա) աղջիկ՝

բ) տղա՝

2. Ընտանիքների թիվը

ա) լրիվ կազմով՝

բ) ոչ լրիվ կազմով՝

3. Անապահով ընտանիքների թիվը՝

Նրանցում՝ երեխաների թիվը՝

4. Բազմազավակ ընտանիքների թիվը

Նրանցում՝ երեխաների թիվը՝

5. «Ռիսկային խմբի» ընտանիքների թիվը՝

6. Ընտանիքներ, որտեղ ծնողները չեն աշխատում՝

7. Խնամակալության տակ գտնվող երեխաների թիվը՝

8. Դասերից հաճախակի բացակայող երեխաներ

9. Դժվար դաստիարակվող երեխաներ

Դասղեկ՝ _____/_____